# ԴԱՍ 10. ՀԱՓՇՏԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽՈՐԴՈՒՄ Է ՆԵՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

**Ընդմիջումը** — Դանիել 9:26-27

Եւ իմացիր ու հասկացիր, որ Երուսաղէմը դարձեալ շինելու համար հրաման դուրս գալուց մինչեւ Մեսիա իշխանը **եօթը եօթնեակ** եւ **վաթսուներկու եօթնեակ** կայ, որ դարձեալ պիտի շինուի **հրապարակը եւ պարիսպը**, այն էլ նեղ ժամանակներում: 26 Եւ վաթսուներկու եօթնեակից հետո պիտի **Մեսիան մահով դատապարտուի** բայց չէ թէ իր համար. **Եւ եկող իշխանի** ժողովուրդը պիտի փչացնէ քաղաքը եւ սրբարանը, եւ նորա վերջը իբր թէ հեղեղով կլինի, եւ մինչեւ պատերազմի վերջը աւերումներ են որոշուած: 27 Եւ նա պիտի զօրացնէ ուխտը շատերի համար **մէկ եօթնեակ**, եւ եօթնեակի կէսին պիտի դադարեցնէ զոհը եւ պատարագը. Եւ տաճարի ծայրի վերա աւերածի պղծութիւնը կլինի մինչեւ որ վերջնական եւ <u>նախասահմանեալ</u> պատուհասը կթափուի աւերածի վրա:




## Հափշտակությունը նախորդում է Նեղություններին



## Հայտնություն գրքի կառուցվածքը
**Revelation Architecture**

- Ճրագակալները. ներկայացնում են Եկեղեցին (Հայտ. 1:20) երկնքում, ուր Հովհաննեսը գնաց (Հայտ. 4:5)
- 24 երեցներ. Ներկայացնում են փրկվածներին (Հայտ. 5:9,10), երկրպագում են, մինչև Գառը վերցնում է գիրքը. Նեղությունները սկսվում են, երբ գրքի կնիքները քանդվում են. 70-րդ շաբաթվա մանրամասները (Հայտ. 6-19)

«Գրիր, ինչ որ տեսնում ես՝ (Քրիստոսի տեսիլքը, գլուխ 1) այն, որ կա (Յոթ Եկեղեցիները, գլուխ 2,3) **և այն, որ հետո է լինելու (4-22)**»:

## «Հափշտակությունը նեղություններից հետո» տեսակետի խնդիրները
**Post-Tribulation Problems**

Հերքում է Նոր Կտակարանի ուսուցումը **հանկարծակիության (imminency) մասին.** մենք պետք է Նրան սպասենք ցանկացած պահի: Այս տեսանկյունը պահանջում է, որ Եկեղեցին երկրի վրա լինի 70-րդ Շաբաթվա ընթացքում, Իսրայելն ու Եկեղեցին փոխադարձաբար բացառող են (Դան. 9:26):

Այս դեպքում, Եկեղեցին կկրեր Աստծո բարկությունը. սակայն խոստում կա, որ նա չպետք է կրի այն (Ա Թեսաղ. 5:9, Հայտ. 3:10): **Ինչպե՞ս կարող է Հարսը գալ Նրա հետ:** Ո՞վ պետք է ապրի Հազարամյայի ժամանակ երկրի վրա:

1 Թես. 5:9 - Որովհետեւ Աստուած մեզ չ’դրավ բարկության համար, այլ փրկությունը ստանալու համար մեր Տէր Հիսուս Քրիստոսի ձեռով.

Հայ. 3:10 - Որովհետեւ իմ համբերության խօսքը պահեցիր, ես էլ քեզ կ’պահեմ այն փորձության ժամից, որ գալու է այս աշխարհի վրա, որ փորձի երկրի երեսի վրա բնակողներին:

## «Հափշտակությունը նախորդում է Նեղություններին» տեսակետը
**Rapture Precedes the Tribulation**

70-րդ շաբաթը սահմանվում է հակաքրիստոսի կողմից հարկադրաբար կնքված ուխտի միջոցով (Դան. 9:27): «Մեծ նեղությունները» = տևում են 70-րդ շաբաթի կեսը (Մաթ. 24:15,21): Նա չի կարող հայտնվել, նախքան հափշտակությունը տեղի կունենա (Բ Թեսաղ. 2:6-9):

2 Թես. 2:6-8 - Եւ այժմ դուք ինքներդ գիտէք, թէ ինչն է նրան հետ պահում, որ այդ Հակառակորդը ինքն իրեն հայտնի անի մինչեւ ժամանակը գա. 7 որովհետեւ անօրէնության այդ խորհրդավոր ուժը արդէն գործի վրա է. բայց այդ պիտի չհայտնուի մինչեւ այն ժամանակ, երբ մէջտեղից կը վերացուի **նա**, որ այժմ նրան հետ է պահում: 8 Եւ ապա պիտի հայտնուի Անօրէնը, որին Տէր Հիսուս պիտի կործանի իր բերանի հոգով եւ պիտի ոչնչացնի իր հայտնությամբ իր գալստյան ժամանակ:

### Երկու ծայրահեղություններ

- Հափշտակության մոլուցք (ժամկետ նշողները)
- **Հափշտակության չլինելը.** զուտ ամերիկյան մտագարություն. քանի որ Եկեղեցին չի անցնելու Մեծ Նեղությունների միջով, ինչու մենք պետք է խուսափենք այն ամենից, ինչ Քրիստոսի Մարմնի մեծ մասը, աշխարհի մեծ մասում, գրեթե 2000 տարի դիմացել է:

## Խոստումը Հովհ. 14 — The Promise

«Թող ձեր սրտերը չխռովվեն. Աստծու՛ն հավատացեք, նույնպես Ինձ հավատացեք» (Հովհ. 14:1):

> «Իմ Հոր տանը շատ բնակարաններ կան. եթե այդպես չլիներ, Ես ձեզ կասեի: Ես գնում եմ ձեզ համար տեղ պատրաստելու: Եվ եթե Ես գնամ և ձեզ համար տեղ պատրաստեմ, դարձյալ կգամ և ձեզ Ինձ մոտ կառնեմ, որպեսզի որտեղ Ես եմ, դուք էլ այնտեղ լինեք» (Հովհ. 14:2,3):

### Հրեական հարսանիքը

- Ketubah, Նշանդրեք, գնման գինը; (Հարսը՝ սրբված զատվում է.)
  (Ելից 19:15, Ես. 61:10; Դատավորներ 14:10-11, Երեմիա 2:32, Ես. 49:18; Սաղ. 45: 8-15):
- Փեսան մեկնում է Հոր տուն. Պատրաստում է սենյակ. Հարսը պատրաստվում է փեսայի անմիջական վերադարձին:
- Անսպասելի հավաքույթ. Huppah, հարսանիքը: (Երեմ. 7.34, 16.9; 25.10, Սաղմոս 45.8-15, Մատթ. 25.1-13).
- Յոթօրյա ամուսնության ընթրիք. (Դատավորներ 14:12; Մթ. 9:15, 22: 11-14; Հովհաննես 2:1):

## (Եկեղեցու) Ամուսնությունը՝ կատարված — The Marriage Fulfilled

- Ուխտը՝ կնքված (Ա կորն. 11:25)
  Այս բաժակը նոր ուխտն է իմ արյունով.
- Գինը՝ վճարված (Ա կորն. 6:19-20)
  Չգիտե՞ք, թէ ձեր մարմինները տաճար են Սուրբ Հոգու, որ ձեր մէջ է, եւ որն ստացել էք Աստծուց. եւ դուք ձեր տէրը չէք, քանզի մե՛ծ գնով գնուեցիք, ուստի փառաւորեցէք Աստուծուն ձեր մարմնումը եւ ձեր հոգում՝ որ Աստուծունն են:
- Հարսը՝ զատված (Եփ. 5:25-27, Ա Կորն. 6:11, Եբր. 10:10, 13:12)
  Մարդի՛կ, սիրեցէ՛ք ձեր կանանց, ինչպէս որ Քրիստոս սիրեց եկեղեցին եւ իր անձը **մատնեց** նրա համար, **որ** սրբացնի աւազանի մաքրութեամբ՝ խօսքով, որպէսզի նա իր առաջ փառաւոր կերպով կանգնեցնի եկեղեցին, որ ոչ մի արատ կամ աղտեղութիւն կամ նման բաներից ոչինչ չունենայ, այլ լինի սուրբ եւ անարատ:
- Ուխտը՝ հիշատակված (Ա Կորն. 11:25-26)
  քանի անգամ որ խմէք, իմ հիշատակի համար:

- Փեսան գնացել է Հոր տուն…
  Իմ Հօր տան մէջ բազում բնակարաններ կան. ապա թէ ոչ ես ձեզ կ՛ասէի. Գնում եմ ձեզ համար տեղ պատրաստելու.
- Երբ Նա վերադառնա Իր հարսնացուին տանելու, Նրան ուղեկցելու են (Ա Թեսաղ. 4:16-17)

  նորանց հետ մէկտեղ ամպերով օդի մէջ կ'յափշտակուինք Տիրոջը դիմաւորելու

## Ընթացքը Ա Թեսաղոնիկեցիներին 4:13-18 — The Process

«Քանի որ գիտեմ՝ Իմ Փրկագնողն ապրում է, ու վերջին օրը **Նա կանգնելու է երկրի վրա.** ու թէկուզ մաշկիցս հետո որդերը կործանեն այս մարմինը, դարձյալ **այս մարմնով տեսնելու եմ Աստծուն**, ու ես ինքս եմ տեսնելու, ու իմ աչքերն են դիտելու Նրան, և ոչ թե ուրիշինը, թեև երիկամունքս իմ մեջ հալչում են» (Հոբ 19:25-27):

«Չենք ուզում, եղբայրնե՛ր, որ անգետ լինեք ննջեցյալների վերաբերյալ, որ չտրտմեք, ինչպես ուրիշները, որոնք հույս չունեն: Որովհետև, եթե հավատում ենք, թե Քրիստոսը մեռավ և հարություն առավ, այնպես էլ Աստված Հիսուսով ննջողներին կբերի Նրա հետ: Որովհետև, Տիրոջ խոսքով ձեզ սա ենք ասում, թե մեզնից նրանք, որ կենդանի են ու մեան մինչև Տիրոջ գալուստը, ննջեցյալներից առաջ չեն անցնելու: Որովհետև Տերն Ինքը **հրամայական գոչյունով**, հրեշտակապետի ձայնով, **Աստծո փողով** կիջնի երկնքից, և նախ Քրիստոսով **մեռնողները հարություն պիտի առնեն. հետո մենք,** եթե ողջ մեանք, նրանց հետ պետք է **հափշտակվենք ամպերով՝ օդի մեջ** Տիրոջը դիմավորելու. և այդպես հավիտյան Տիրոջ հետ պիտի լինենք: Ուրեմն մխիթարեցե՛ք միմյանց այս խոսքերով» (Ա Թեսաղ. 4:13-18):

## Յոթ «հափշտակություններ» — Seven “Raptures”

- Ենովքը. Ծննդ. 5:42, Եբր. 11:5
- Եղիան. Դ Թագ. 2:1,11
- Հիսուսը. Մարկ. 16:19, **Գործք 1:9-11**, **Հայտ. 12:5**
- Փիլիպպոսը. Գործք 8:39
- Պողոսը. Բ Կորն. 12:2-4
- Քրիստոսի Մարմինը. Ա Թեսաղ. 4:17
- Հովհաննեսը. Հայտն. 4:1

***=harpazo***

Strong's Number **G726** matches the Greek ἁρπάζω (*harpazō*),which occurs 21 times in **14** verses
**Մատ. 11:12, 13:19, Հովհ. 6:15, 10:12, 10:28,29, Գործք. 8:39, 23:10, 2 Կոր. 12:12, 12:4, 1 Թեսա. 4:17, Հուդա 1:23, Հայտ. 12:5**

Հով. 6:15 -  Յիսուսն էլ իմանալով թէ գալու են իրան յափշտակեն (take Him by force), որ թագաւոր շինեն իրան, դարձեալ մինակ գնաց սարը:

Հով. 10:12 - …եւ գայլը յափշտակում է (catches the sheep) նորանց եւ ցրվում է ոչխարներին:

Հով. 10:28-29 -  եւ ես նրանց կը տամ հավիտենական կեանք. եւ նրանք չեն կորչի հաւիտյան. եւ ոչ ոք նրանց իմ ձեռքից չի յափշտակի (snatch): 29 Իմ Հայրը, որ նրանց ինձ տուեց, ամենքից մեծ է. եւ իմ Հօր ձեռքից ոչ ոք չի կարող ոչինչ հափշտակել (snatch):

## Նպատակը — The Purpose

«Ուրեմն պետք է ասեմ ձեզ, եղբայրնե՛ր, որ արյունն ու մարմինը չեն կարող Աստծո թագավորությունը ժառանգել, ո՛չ էլ ապականությունն անապականություն կժառանգի: Ահա, մի խորհուրդ հայտնեմ ձեզ. բոլորս պիտի չննջենք, բայց բոլորս պիտի՛ **փոխվենք**, **հանկարծակի**, մեկ **ակնթարթում՝ վերջին փողի** ժամանակ, որովհետև փողը կհնչի, մեռելները հարություն կառնեն առանց ապականության, և մենք **կփոխվենք**: Որովհետև պետք է, որ այս ապականացուն անապականություն հագնի, և մահկանացուն անմահություն հագնի» (Ա Կորն. 15:50-53):

«…ակնթարթ». թվային արժեքը՝ 10-43 վայրկյան:

«Եվ երբ այս ապականացուն անապականություն հագնի և այս մահկանացուն՝ անմահություն, այն ժամանակ կկատարվի այն խոսքը, որ ասում է. «Մահը կուլ գնաց հաղթության»: «Ո՛վ մահ, ո՞ւր է քո խայթոցը, ո՛վ գերեզման, ո՞ւր է քո հաղթանակը» (Ա Կորն. 15:54-55):

- Նրա նման պիտի լինենք. Ա Հովհ. 3:2

«Սիրելինե՛ր, մենք հիմա Աստծո որդիներն ենք, ու դեռևս հայտնի չէ, թե ինչ ենք լինելու. բայց գիտենք, որ երբ Նա հայտնվի, Նրա նման պիտի լինենք, քանի որ Նրան տեսնելու ենք այնպես, ինչպես որ Նա է» (Ա Հովհ. 3:2):

«Քանի որ մենք գիտենք, որ եթե մեր այս վրանի երկրային տունը քանդվի, մենք Աստծուց մի այլ շինություն ունենք, անձեռակերտ ու հավիտենական տուն երկնքում: Դրա համար էլ հեծում ենք, խիստ ցանկանալով հագնել մեր բնակությունը, որ երկնքից է» (Բ Կորն. 5:1,2):

## Հափշտակության և Երկրորդ գալուստի հատվածներ

| Հափշտակություն | Երկրորդ գալուստ |
|---|---|
| Հովh. 14:1-3 | Դան. 2:44-45 |
| Հռոմ. 8:19 | Դան. 2:44-45 |
| Ա Կորն. 1:7-8 | Դան. 7:9-14 |
| Ա Կորն. 15:1-53 | Դան. 12:1-3 |
| Ա Կորն. 16:22 | Զաք. 14:1-15 |
| Փիլիպ. 3:20-21 | Մաթ. 13:41 |
| Կող. 3:4 | Մաթ. 24:15-31 |
| Ա Թեսաղ. 1:10 | Մաթ. 26:64 |
| Ա Թեսաղ. 2:19 | Մարկ. 13:14-27 |
| Ա Թեսաղ. 4:13-18 | Մարկ. 14:62 |
| Ա Թեսաղ. 5:9 | Ղուկ. 21:25-28 |
| Ա Թեսաղ. 5:23 | Գործք 1:9-11 |
| Բ Թեսաղ. 2:1 | Գործք 3:19-21 |
| Ա Տիմ. 6:14 | Ա Թեսաղ. 3:13 |
| Բ Տիմ. 4:1 | Բ Թեսաղ. 1:6-10 |
| Տիտ. 2:13 | Բ Թեսաղ. 2:8 |
| Եբր. 9:28 | Բ Պետ. 3:1-14 |
| Հակ. 5:7-9 | Հուդա 14-15 |
| Ա Պետ. 1:7, 13 | Հայտ. 1:7 |
| Ա Հովh. 2:28-3:2 | Հայտ. 19:11-20:6 |
| Հուդա 21 | Հայտ. 22:7, 12, 20 |
| Հայտ. 2:25, Հայտ. 3:10 | |

## Երկու՞ դեպքեր — Two Events?

| Հափշտակություն | Երկրորդ գալուստ |
|---|---|
| Բոլոր հավատացյալների վերափոխումը: | Ոչ մի վերափոխում: |
| Վերափոխված սրբերը գնում են երկինք: | Վերափոխված սրբերը վերադառնում են երկիր: |
| Երկիրը դեռ չի դատվում: | Երկիրը դատվում է, արդարություն է հաստատվում: |
| Մոտալուտ, ցանկացած պահի, առանց նախանշանների: | Հետևում է հստակ կանխասացված նախանշանների, ներառյալ նեղությունները: |
| Հին Կտակարանում չկա: | Հին Կտակարանում հաճախ է մարգարեացված: |
| Միայն հավատացյալները: | Ազդում է բոլոր մարդկանց վրա: |
| Նախքան բարկության օրը: | Ամփոփում է բարկության օրը: |
| Սատանայի մասին ոչ մի հղում չկա: | Սատանան կապված է: |
| Քրիստոսը գալիս է Իրենների հետևից: | Քրիստոսը գալիս է Իրենների հետ: |
| Նա գալիս է ամպերի մեջ: | Նա գալիս է երկրի վրա: |
| Նա գալիս է Իր Հարսնացուի հետևից: | Նա գալիս է Իր Հարսնացուի հետ միասին: |
| Միայն Իրեններն են տեսնելու: | Ամեն աչք կտեսնի Նրան: |
| Նեղությունները սկսվում են: | Հազարամյա թագավորությունը սկսվում է: |
| Միայն եկեղեցու հավատացյալնե՞րը: | ՀԿ-ի փրկվածները ավելի ուշ են հարություն առնում: |

## Յանկարծակիության վարդապետությունը

- Հավատացյալները սովորել են Փրկչին երկնքից **<u>սպասել</u>** ցանկացած պահի (Փիլ. 3:20, Տիտ. 2:13, Եբր. 9:28, Ա Թեսաղ. 1:10, 5:6, Հայտ. 22:20)

  Փիլիպ. 3:20 - Բայց մեր քաղաքականութիւնը երկնքումն է, որ այնտեղից <u>սպասում ենք</u> Փրկչին՝ Տէր Յիսուս Քրիստոսին.

  Եբր. 9:28 - Նոյնպէս էլ Քրիստոսը մէկ անգամ պատարագուեցաւ շատերի մեղքերը վեր առնելու համար. եւ երկրորդ անգամ առանց մեղքի <u>կհայտնուի</u> իրեն սպասողներին փրկութեան համար:

  1 Թես. 1:10 - Եւ <u>սպասէք</u> նորա Որդուն երկնքից, որին հարություն տուաւ մեռելների միջից՝ Հիսուսին որ փրկում է մեզ գալու բարկութիւնիցը:

- Արտահայտում է հույս և ջերմ ակնկալիք (Ա Թեսաղ. 1:10)

  1 Թես. 1:10 - Եւ սպասէք նորա Որդուն երկնքից, որին հարություն տուաւ մեռելների միջից՝ Հիսուսին որ փրկում է մեզ <u>գալու բարկութիւնիցը</u>:

- Արդյունքում կլինի հաղթական և սուրբ կյանք (Ա Հովհ. 3:2,3)

  1 Հով. 3:2-3 - Սիրելիներ, հիմա Աստուծո որդիք ենք, եւ տակաւին հայտնուած չէ թէ ինչ պիտի լինենք. բայց գիտենք թէ, երբոր նա կ'յայտնուի, նորան նման կ'լինենք, որովհետեւ կ'տեսնենք նորան ինչպէս որ է: 3 Եւ ամեն ով որ այս հոյսն ունի իրանում, <u>սրբում է իր անձն</u> ինչպէս որ նա սուրբ է:

- Թվում է, Պողոսն իրեն էլ էր ներառում այն մարդկանց թվում, ովքեր սպասում էին Քրիստոսի վերադարձին (Ա Թեսաղ. 4:15,17, Բ Թեսաղ. 2:1)

  1 Թես. 4:16 - Եւ հետո <u>մենք</u>, որ կենդանի ենք մնացած նորանց հետ մէկտեղ ամպերով օդի մէջ կ'հափշտակուինք Տիրոջը դիմաւորելու…

- Պողոսը խրատում էր Տիմոթեոսին. «Այս պատվիրանն անբիծ և անհանդիմանելի պահես՝ մինչև մեր Տեր Հիսուս Քրիստոսի <u>հայտնվելը</u>» (Ա Տիմ. 6:14)

- Հրեա նորադարձներին հիշեցում եղավ. «Մի քիչ ժամանակ էլ, և Նա, որ գալու է, պիտի գա ու <u>պիտի չուշանա</u>» (Եբր. 10:37): «Գործածե՛ք, մինչև վերադառնամ» (Ղուկ. 19:13)

### Pre-Tribulation Eschatology

Epistle of Barnabas, **(a.d. 100); Irenaeus, in** Against Heresies; **Hippolytus, a disciple of Irenaeus (2nd century); Justin Martyr,** Dialogue with Trypho; **Ephraem, the Syrian (4th century—see quote below); Peter Jurieu,** The **Approaching Deliverance of the Church, 1687; Philip Doddridge's Commentary on the New Testament, 1738; Dr. John Gill, Commentary on the New Testament, 1748; James Macknight, Commentary on the Apostolical** Epistles, **1763; Thomas Scott,** Commentary on the Holy Bible, **1792.**

### Pre-Trib Popularization

Emanuel Lacunza (Ben Ezra), 1812; Edward Irving, 1816; John N. Darby, 1820; Margaret McDonald, 1830.